

ՎԵԱՍ ԿԱՌՆԻԱՑԻ

ՎԵՆԵՑԻԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ ԺԶ ԴԱՄՈՒՆ

(Տես էջ 119)

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ամենաշատն Հեղեղորին:

Ա. Ան Պատմապոյ թաղին մէջ, և յատկապէս վամբիկոյ տէի Ակուկլիճի կոչուած հրապարակին մօտերը, տան մի գետնայարկին վրայ գտնուած խեղճուկ սենեկի մը մէջ, նախընթաց դիխոյն մէջ պատմեալ դէպքերուն հանդիպած իրիկուն, մէկտեղ նատեր էին խեղճ վիկորինէ և նորա Ոէքրո հօրեղորորդին: Վերջինս երկնցած էր մարմնով արկնի մը վրայ, որ իրեն չըսեմ անկողնի, այլ լուսեկի տեղ կը ծառայէր. իսկ Վիկորինէ զրադաս էր կարկուտելու իւր ազգականն էրն վերնազգեստը, որոյ բազմաթիւ ծակերն կ'իմացը նէին թէ որչափ երկայն տարիներ ծառայէր էր պահպանելու խեղճ նաւազարը ձմեռուան ցրտէն:

Ճամբ տասնումէկը զարկաւ, և Վիկորինէ յօդնածութիւն զգալով՝ առաջ ճրագը, որ արդէն մօտ էր մարելու նննդեան պակսութեան պատճառաւ, և իւր ազգականն բարի գիշեր մաղթելով մերձակայ սենեկի քաշուեցաւ:

Փիշ վայրկենէ եսքը այն տանը մէջ խորին լուսութիւն մի տիրեց, որ միայն կ'ամրոխէր Ոէքրոյի խորդալու ձայնէն, որ թէպէս և այն կարծք անկողնին վրայ պառկած էր, բայց ամբողջ օրի աշխատած լինելով՝ այնքան անուշ կը քնանար, որ կընար նախանձ շարժել այնպիսիներու, որք կակուղ անկողնոց մէջ փափուկ վարագոյներու ներքեւ շնն կընար ամրող գիշերը աշքերնին դոցել. վասն զի գուցէ խեղճ մէկը խայթէ իրնոց սեւ ինզմտանքը, և չի թողուր վասնէլու իրենց այն բարիքը, զոր բնութիւնն առատապէս կը չորհէ խեղճ ամեկին, իբրև օգնութիւնն նորա օրէ ըստ օրէ աշխատանաց և քաշած վշտակրութեանց:

Հատուցման օրէնք մ'է այս, զոր Ամենակարողն իւր գաղտնի նախատեսութեամբ սահմանած է իրրև միախթարութիւն մարդկութեան տառապեալ մասին:

Իէս գիշերուան մօտ էր, երբ Ոէքրո, որ այնպէս անուշ քոն կը քաշէր, արթնցաւ յանկարծակի իւր տանը դրան վրայ ՚ի գործ դրուած ետևէ ետե շատ մը Հարուածներուն բաղնինէն:

— Ո՞վ է, հարցուց նա, մէկդի նետելով ոտքին տակ ինկած ծածկոցը և նըստելով:

— Ես եմ, Ոէքրո, պատասխանեց ձայն մի, որ ելեքտրականացուց թմրած նաւազարը, որ գրեթէ վախցած ոտք ելաւ, և աշքերը շփելով՝ պատրոյգ մի վառեց, ինքն իրեն ըսելով. «Եթէ ապահով չըլլայի որ կէն զատ ուրիի, բան չեմ խմած, պիտի ըսէի որ գինովցեր եմ. այնքան այս ձայնս կը նմանի իրեն»

Բայց դրան անդադար հարուածներն զնաւապարն իւր խորհրդածութիւններն չեղեցին, որ ձեռքը ճրագը բռնած՝ զգուշութեամբ մէկդի քաշեց դրան նիւգը և դրան միայն կէսը բացաւ:

— Ի՞նչ, կուզեիր որ դրանդ առնելը գիշերապահ գինուորի պէս հսկեմ, ըստ, առջևն ելլերով գինուորական դիմք մարդ մի, վերէն վար ծածկուած լսյն վերարկուաւ մի, որոյ ներքն կը նշանարուէր գինուորական տարազն:

Իրաւցընէ հրաշք մ'եղաւ որ Պէրբօ այդ մարդը տեսած առաջը ձեռքն չթողուց: Ետ ետ քաշուեցաւ նա անթարթ աշքով նայելով եկաւորին գէմքը: որ շրջազգեստը վար առնելով մոռաւ սենեկին մէջ և դռուը կրկին դոցեց:

— Պէրբօ, ըստ յետոյ՝ ծիծաղելով այն անձն, այ զիս չե՞ն ճանչեր:

— Այս ձայնն . . . այդ գէմքն . . . կարծեմ . . . թոթովից ապշութեամբ նաւագարն:

— Բայց լաւ մը նայէ ինժի, Տէ՛ր Աստուած: Կարելի՞ է որ չորս տարուան մէջ այնափ փոխուած լինիմ որ դռու զիս ճանչել չկարենաւ:

— Հօրեղբօրորդւոյն Գէորգին ոգին . . . գունչ Պէրբօ:

— Զէ ոգին, չէ . միս ու ոսկր՝ ես հօրեղբօրորդիշ Գէորգ Տօլֆինն եմ:

Այս խօսքերուո վրայ Պէրբօ սեղանին վրայ դրաւ ճարգը, ցատկեց իւր աղպականին վիզը, և իւր աւ այտերուն վրայ փայլեցան քանի մը սիրոյ արցունքներ:

Իրաւցընէ, նոր եկաւորն էր Պէրբօ Տօլֆին, Վիկտորինէի էրիկն, որ թէ վիկտորինէ և թէ ազնի նաւավարն մեռած համարեր էին, ինչպէս որ վկայեր էր իրենց խեղճ ամռանոյն գժբախտ լուրը տալու համար ուղարկուած բանքեն:

Թէ ինչպէս արդեօք ինքն այն ժամուն իւր հօրեղբօրորդւոյն տունը կը գըտնուէր, անցնինք համառօտիւ պատմելու:

Գէորգ Տօլֆին, ամենառողջ կազմուածք ունենալով, յետ Գթութեան Փրոջիրն վրայ վերարկուաւ ցուցած խնամոց գեղերու և պատսպարութեան, քանի մը ժամէ վերջը առողջապահական նմքին այցելութիւնն ունեցաւ, որք իրենց կառերով կը շրջէին պատերազմի դաշտին չորս դին՝ մեռեալները թաղելու և վիրաւորները տեղափոխելու համար:

Այս գինուորացմէ մի քանին երր մօտեցան Գէորգի մարմնոյն, տեսնելով նորա դիմաց վերին աստիճանի տժգունութիւնը և ո՞ր և իցէ կենգանութեան ցոյց տուող նշանի մը շերենան, զինքը մեռաց կարքին մէջ դրին, և տարին այն փոման մօս ուր նոցա դիմաներ պիտի զետեղուէին: Երբ երկու պատունեալք զինքը կարքէն վար առին՝ անբրադարձան որ Գէորգ փոքր շարժմանք մ'ըրտաւ ուստի մէկդի զնելով զինքը, անոնցմէ մին ականչել մօտեցուց նորա սրտին ճախակողվեան մասին, և իմացա, որ սրտին բարախմունքն բոլորովին գաղրած չէին: Փութով տարին զինքը հիւանդանոց, ուր Գթութեան վերց սիրալիր նըռնամօք և իւր բնատուր քաջակազմութեամբ, Գէորգ քանի մ'ամիս վերջը բոլորովին առողջացաւ: Բայց որովհետեւ թնամիր վերատին աւելի բազմաթիւ և աւելի քաջ պատսպարուած Հասարակապետութեան զինուց գէմ արշաւեցին, ինքն ալ պարտաւորեցաւ բանակը դառնալը, ուր գիշազնարար պատերազմելով մնաց մինչեւ այն մարդածախ պատերազմին լմնալը, որ թէ Հասարակապետութեան և թէ զախնակցաց այնքան արեան և ծախուց պատճեան եղաւ:

Հազար թէ ազատեցաւ Գէորգ, մօտմուուք մէջ ընկած իրեն ընտանեացմէ բնաւ լուր մի շընդունելուն համար, և ոչ պատսպախան մի իւր նսմակներուն, զոր զրկած էր առ ամուսինն՝ իւր քիչ մը հանգստեան ժամանակ զտած ատեն, աղերազդիր տուաւ և հրաման ընդունեցաւ հայրենիքը դառնալու: Եւ ահա Վենետիկ հասած էր դիշերուան ոչ ատեն: և իրեն առաջին մօտածութիւնն եւ դաւ իւր ամռանոյն ի խնդիր ելնելու, անձկանոց գրկելու զայն և իւր սրտին վրայ ողջագուրելու իրենց սիրոյն պատուը, զոր այնքան եռանդապին յանձնած էր Աստուծոյ գթութեան, պատերազմի դաշտին վրայ վիրաւոր տարածուած ա-

տեն: Բայց Վիկտորինէի բնակութիւնն անմարդի էր. և այն ժամուն չդառաւ մէ-
կը որ իրեն խմացընէր թէ ուր փոխաղրած էր նորա ամուսինն իւր նոր բնակու-
թիւնը. ուստի որոշեց իւր հօրեղբօրորորւցն գուռը զարնելու ուր տեսանկ նո-
րա գալուստն, որ ուրախութեան և Հիացման այնքան շարժումներ կատարել
տուու. քնալից նաւավարին իւր անակնունելի այցելութեամբ:

Սիրոյ առաջն ցոյցերէ վերը, հարցուց Գէորգ իւր աղքականին թէ գիտէ՞ր
արդեգ իւր կնոջ և որդոյն ուր գտնուին:

Պէրբօ յետ պատմելու իրեն ինչ դժբախուռթիւններ որ անցած էին իւր
խեղճ կնոջը զլխէն, նորա մօրեղբօր մահուընէն վերջը, և թէ ինչպէս այս վեր-
ջնէն անժառանգ թողուեցաւ՝ նորա տանտիկնոյ շարութեամբ, և թէ ինչ կեր-
պով այն կնիկն վարուեցաւ. Վիկտորինէի հետ, իմացուց իրեն որ ստիպուեցաւ
իւր քովն առնելու զվիկտորինէ, զինքը անօթութենէ և ցրտէ պահպանելու
համար:

Բայց չդիտնալով թէ ինչ կերպով սկսի իմացընել Գէորգի՝ նորա որդուոյն
Դարձմանոց դրույլը, խօսքը փոխեց, և հրաւիրեց զինքը ճաշակելու ընթրիքին
մացորդը, թրջելով ցայն անոյշ լրով, մի միայն զինքն, ինչպէս կ'սէր Պէր-
բօ, որ իւր տան մէջ մուտք ունեցեր էր այն օրէն՝ ի վեր՝ յորում ստիպուեցաւ
իւր վաստակոց արդիւնքը բաժնելու իւր աղքականին Վիկտորինէի հետ:

— Նեղութիւն մի քանչըր, Պէրբօ, ըստ Գէորգ նաւավարին աղքիւ հրաւէր-
քը լսելով. խօսէ ինծի կնոջ և որդւոյս վրայագ. ըսէ, աղէկ անցուց իւր տղա-
բերքը:

— Ամենաղէկ:

— Որդիս ողջ է:

Այս հարցմունքս վերջապէս տագնապի մէջ ձգեց խեղճ նաւավարը, որ պա-
տասխանեց:

— Յայսնի է որ կ'ապրի:

— Իրեն տար դիս ուրեմն. կ'անձկամ փոքրիկ տղեկս տեսնելու և կինս ողջա-
գուրեխու վայրկելին:

— Կինտ տեսնալու համար՝ շատ լաւ, պատասխանեց Պէրբօ բոլորովին շխո-
թած . . . Բայց նայէ . . . տես . . . կնիկդ կը քնանայ . . . դարձեալ քիչ մ'ալ
հրանդուս է . . . թող որ հազիւ թէ անկողին գնաց . . . ինքն զեղեղ մեռածի
տեղ դրեր էր, ինչպէս որ ես ալ. մանաւանդ թէ հոգւոյդ համար պատարաց
մ'ալ ըսել տուինք, և այնշափ ի խորոց կարդացի սազմուոս կրկնեցինք, որ կրնան
քեզի ուրիշ անգամուան համար ալ օգտակար լինել. Բայց Աստուած քեզնէն
հեռու պահէ . . . Ուստի կը հասնամ որ այսպէս յանկարծական իրեն քով եր-
թալը կրնայ ձախորդ բան մի յառաջ բերել . . . ինծի կ'երսի որ լաւ կը մնի
նախ իմաց տալ իրեն քու գալուստդ: Ըստան աղէկ չէ:

— Այս, լաւ կ'ըսես. բայց պէտք է գիտնա որ . . .

— Ամէն բան կը հասկընամ . . . բայց թէ որ իրեն քով երթաս այսպէս տըժ-
գոյն և յոգնած շլջոն մեռելի մը նման, ինքը պատի խոռվի . . . և այն տաեն.
Կեցիր, Գէորգ, կազմուուէ, քիչ մը բան կեր. ու ես կ'երթամ կնոջը սենեա-
կը զինքը պատրաստելու գու տեսնութեանդ: Տեսնես թէ ինչպէս բանը կարգի
դնել գիտեմ. բաւական է որ դու շարժիս . . . ինծի թող ընելիքս, հասկըցար:

Այսպէս վեր ի վերց մէջ բերուած Պէրբօյի պատճաներն համոզեցին ըզ-
Գէորգ զինանելու նորա կամացը: Պէրբօ ուրախանալով որ առանց տղուն խըն-
դիրը յուզելու կարող եղաւ աղատիլ, դիմեց դէպ ի Վիկտորինէի սենեակը,
որ նոր կը քնանար:

Պէրբօ քիչ մը խորհրդածելէն վերջը, մօտեցաւ քնացողին անկողնոյն՝ կէս մը շփշփած, և ձայն տուաւ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կուզես, հարցուց կինն յանկարծակի արթննալով:
— Որովհետեւ քիչ մ' առաջ քու վրայագր խօսք կ' ընէի մարդու մի հետ:
— Այս ժամանս, աւելցուց կինն կիսարթուն վիճակի մեջ. և միւս կողմանէ աշ քերը կը շփշփէր, որ կը ներդէին կանթեղին արձեղած ճառագայթներէն:
— Ի՞նչ ընենք, ախորդուի և անախորդ լուրերը հաստատուն ժամանակ շու նին: ուզած ասենին կը հասնին:

— Լաւ, ուրեմն, որո՞ւ հետ կը խօսէիր:

— Նորա հետ կը խօսէի, որ ինքն ալ քեզի հետ խօսել կը փափաքի. և թէ որ դուն զինքը կարենաս տեսնել առանց վախ զգալու, երկունիդ իրարու պիտի յարմարի ու գործը յախող ելք պիտի ունենայ:

— Այսպէս կը խօսիս որ բան չիմ կրնալ հասկնալ: Որոշ ըսէ. այնպէս կ' երկի իրբն թէ յուզման ազդեցութիւն կը կրես, որ հետևարար չի թողուր որ միտք հասկըցնելու չափ խօսիս:

— Երաւանք ունիս Ռւասի պէտք է գիտնաս որ շատ անգամ լուրերը ճիշդ չեն հասնիր և կամ շխտակ չեն հասկըցուիր. այս պատճառաւ երբեմն երբեմն մշշտեղ կ' երւելն այնպիսիք ունանք՝ որք մեռած կը կարծուէին և մեռած չեն եղեր: Ռւասի եթէ այս տեսակ մեռնողներէն մէկը յարութիւն առած՝ տեսնես որ հոռ քեզի գայ, ամենեւին պէտք չէ որ վախես, պէտք չէ որ հրէշ կարծես կամ անկարծի բան:

Վիկտորինէ իւր ազգականին այս կցկտուր խօսքերուն ուշադրութեամբ մորիկ ըրած ասեն՝ գորս նա գերմանդկային ոյժ մի բանեցուց քովէ քով շարելու համար — կը զգար այնպիսի բուռն սասակութեամբ սրտին բարխումը, իւր թէ պայթիլ ուղիղ եղին մէջ:

Կնոջ մը սրտէն աւելի կանխիկ գիտութեան ազգեցութիւն կրօղ բան չկայ. նորա սիրտն գուշակել կու տայ իրեն թէ շար և թէ բարի լուրերը: Այսպէս հանդիպեցան նաև Վիկտորինէի, որ ուրախութեան և միանգամայն սրտադողի զգացմամբ, բառ իւր ազգականին.

— Համարձակ խօսէ, Պէրբօ, խօսէ . . . արդեօք լուր առիր որ իմ սիրելի Գէորգ մեռած չէ:

— Է՛՛, իրաւցընէ այդպէս . . . նման բան մի:

— Իսկ լուրը բերող մարդուն . . .

— Կրնաս հաւատալ, ես կ' երաշաւաւրեմ. մանաւանդ թէ . . . գեռ գուրսն է: Դժուրսն է՛՛, ներս կանչէ . . . մանաւանդ թէ կեցիր, ես իրեն կ' երա թամ: Աւրեմն սռաւ էր Գէորգին մահուան լուրը:

— Այս, սիրելի Վիկտորինէն, կանչեց Գէորգ ներս մոնելով - վասն զի երկու ազգականաց խօսացութիւնը մտիկ ընելով՝ չէր կրցած ինքովնքը բռնել: — Այս սռաւ էր մեռնիլս, և ահա քեզի կը դառնամ, պաշտելի սիրունս, երբեք զբեզ թողլու համար:

— Ո՛վ Աստուած իմ, չնորհակալ եմ քեզմէ, զուեց Վիկտորինէ, ողջագուրեւ լով իւր ամուսինը: Բայց չկարենալով ինքովնքը բռնել սասակի ուրախութենէն՝ մարծած ինկամ Գէորգի գերմը:

Բայց նորա նուազումն քիչ տեսեց:

— Վիկտորինէ, հարցուց Գէորգ, երբ նա ինքզինքը գտաւ ուշը վրան գալով, իսկ մեր որդին ուր է: Ի՞նչու չես ցուցըներ որ զինքն ալ սրտիս վրայ ազմեմ:

Այս խօսքերուն վրայ Վիկտորինէի գէմքը կարմրցաւ, իսկ Պէրբօ՝ որ մինչե այն վայրկենին լուռ կեցեր կը դիտէր այն հրաշալի պատկերը՝ ուր այն երկու

անձանց երջանկութիւնն այնքան կենդանի գոյներով նկարուած էր, իւր մէկ ականջը քերեց, քանի մը բառ կակազեց, բայց շփոթեցաւ ու լոեց։
— Ի՞նչ կը նշանակէ այս, հարցուց Գէորգ սարսափած։ Գուցէ մեռած է այն հրեշտակիկն. բայց ոչ . . . ոռ Պէրբ քիչ մ'առաջ ինծի ըսիր որ Կ'ապրի և շատ առաղջ է։

— Իրան է, պատասխանեց մայրն, Կ'ապրի նու . . . վաղը զինքը կը տեսնես։
— Վ աղը, և ինչո՞ւ հիմայ չէ։

— Ահաւասիկ . . . նայէ, ուշ դիր . . . վերապէս վաղը կը տեսնես, արդէն օր մ'առաջ, օր մը վերջը վնաս չի բերեր։ Տես թէ որ այնշափ դժբախտութիւնք վրայ չգային, մինչև հիմա զինքն ալ առած պիտի լինէնք։

— Ո՛հ, Տէր Աստուած . . . ինչո՞ւ չէք զուրցեր . . . ուր է։

— Դարմանոցը, ըսաւ Պէրբօ, երկայն շունչ մի առնելով, իբրև թէ սրտին վրայէն ծանր բեռ մը վերցուած լինէր։

— Դարմանոցը . . . կրկնեց Գէորգ, նայելով մերթ կնոջ և մերթ Պէրբօյի։

— Ի՞նչ կ'ուզեն . . . կինդ հիմանդ էր . . . Ես հարկ ետու որ անիծած պարտատիրով մի պահանջանաց հետևանք՝ բանս մտնեմ Այսպէս ուրեմն, ինքն հիմանդ անդանոց, ես զընդանին մէջ, իսեղ տղան երեսի վրայ շթողլու համար ըստ նիւպուեցանք զինքը Գթութեան Դարմանոցը դնել։

— Ո՛հ, Ներէ ինծի, սիրելի Գէորգս, Ներէ ինծի, ըսաւ վշտագին մայրն, Հանալով իւր արտասուքը բռնել։

— Ներէլ և ինչ բանի ներել. ո՞ւ կինայ ձախորդութեանց դէմ կռուիւթ Պէտք էր բարկանայի միայն որ շուտով զայն ինծի իմացընել չուղեցիր. բայց կը հաս կրնամ . . . մայրինի սէրդ . . .

— Ոիրուն Գէորգս, վրայ բերաւ Վիկտորինէ — այն երկու բառերոն մէջ ամփոփելով իւր երախտագիտութիւնն ամսնանց թօղութեան համար, և մոռնուղով իր որդիէն բաժնուելու ասեն կրած բովանդակ ցաւը։ Ահաւասիկ այն նշանները, ըսաւ նու, որով կրնաս դու վաղը հանել զինքը Դարմանոցէն։

— Վաղը կանուի հոն կ'երթամ։ Դում ալ Պէրբօ ինծի հետ կու զնու։

— Տէ՛ր ողորմեա. մանաւանդ թէ երենին մէկտեղ կ'երթակ կուսույա, ով, և Մեծ Զրանցքին մէջ շընան մ'ընելէց յետոյ, Վլասի քով լաւ նախաճաշ մ'ալ կ'ընենք։ Ո՛հ, մէկ մի համուես ընես, Գէորգ, այնպիսի կուսծծերօ մի կը շինէ, որ ինքինիօյօյէ ալ զերպանց է։

— Գիտեմ, պատասխանեց Գէորգ։ Գեռ կ'ապրի ծեր ապիտավաճառն։

— Միթէ կ'ապրի, մանաւանդ թէ օրէ օր հարստութիւն կը դիզէ։ Պէտք է որ շատ, բայց շուտ դրամ ժողված լինի։ Բաւական է սիրելիք, ես քնանալու կ'երթամ, որովհետեւ ափազաղն քիչ ատենէն պիտի կանչէ։ Իսկ վաղը սեղանի ժամանակ պիտի պատմես զլիսէդ անցտները, և թէ ինչպէս այդ անտանելի ճամբրոգութենէդ խալսեցար. վասն զի, թէ որ կուզեն շխոակը խօսիմ, կ'ըսեմ որ ողջ ես, վասն զի աշքով կը տեսնեմ զգեղ, բայց գեռ հաւասը չի գար։

— Բարի զիւեր մաղթելով իւր ափականաց Պէրբօ զնաց գտրձեալ երկըն. նալու իւր արկեր վրայ, որ իրեն մակողնի սեղ կը ծառայէր. և քիչ վերջը այն տանը մէջ գտրձեալ առաջնան լուսութիւնն սիրեց։

Ճէլթրուտի զրէժխնդրութեան սգւով ըրած ամբաստանութեան հետեանք Վիկտորինէի կալանաւորման զիւուն ամփրապէս նոյն առաւօտը յանձնուեցաւ պաշտօնէին ձեռքը, որ պատուէր ընդունած էր նախի խուզարկելու ամբաստան նելով բնակութիւնը, և յետոյ զինքը 'ի կապան ձգելու։